ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1072/02/24 ք. Երևան
23 Փետրվարի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Գայանե Մազմանյանի, ծանոթանալով «ՆԱՌ-ԱՎ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՊՄ-ի՝ անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի 2024 թվականի հունվարի 9-ի 02-Ա/3 հրամանը՝ «ՆԱՌ-ԱՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ՆԱՌ-ԱՎ» ՍՊ ընկերությունը 08.02.2024թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի՝ 09.01.2024թ. թիվ 02-Ա/3 հրամանը՝ «ՆԱՌ-ԱՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 09.02.2024թ.:
Դատարանի՝ 14.02.2024թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է:

«ՆԱՌ-ԱՎ» ՍՊ ընկերությունը 15.02.2024թ. հայցադիմումը ներկայացրել է կրկին:
Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 15.02.2024թ.:
Դատարանի՝ 20.02.2024թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է:
«ՆԱՌ-ԱՎ» ՍՊ ընկերությունը, հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելուց հետո, 20.02.2024թ. հայցադիմումը ներկայացրել է կրկին:
Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 21.02.2024թ.:
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը.

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ:
Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ 22.03.2024 թվականին:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Գայանե Մազմանյան

Digitally signed by MAZMANYAN GAYANE 6205680386
Date: 2024.02.23 11:32:05 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am